

Վարդապետություն

Վարդապետության դեկանատ՝ Բաղյան Սարգիս

Հեռ 098-43-83-22

Մակերես՝ 8.8կմ²

Բնակչություն՝ 113

vardaghbyur.shirak@mta.gov.am

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, Աշոցքից 7-8կմ հարավ, մարզկենտրոնից գտնվում է 27կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Գյուլլիբուլաղ, Գյուլլիբուլաղ Հայկական, Քյուլլուպուլախ, Կյուլլիպուլախ, Վարդախայր անվանումները: Գյուղը տեղադրված է Գյումրի-Աշոցք ավտոմայրուղու վրա, իրենից ներկայացնում է տրանսպորտային հանգույց: Գյուղը մասամբ տուժել է 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից:

Գյուղը տեղադրված է Ջավախքի լեռնաշղթայի արևմտյան ստորոտում՝ ծովի մակարդակից 2040մ բարձրության վրա: Ունի ցուրտ կլիմա, սակավ տեղումներ: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 450-500մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններն են:

Գյուղի բնակչության նախնիների մի մասը տեղափոխվել է Արևմտյան Հայաստանի Էրզրումի, Բասենի շրջաններից 1828-29թթ: 1831 թ-ին գյուղն ունեցել է 151, 1897 թ-ին՝ 225, 1926 թ-ին՝ 271, 1939 թ-ին՝ 383, 1959 թ-ին՝ 93, 1979 թ-ին՝ 70, 1989 թ-ին՝ 72 բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 113 մարդ: Մեռային կազմում տղամարդիկ կազմում են 57%, կանայք՝ 43%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 29%, աշխատունակներ՝ 55%, հետաշխատունակներ՝ 16%: Ունի 18 տնտեսություն: Ունի տարրական դպրոց, գրադարան, կապի հանգույց:

Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը անասնապահությունն է: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահության կաթնամսատու ուղղությամբ, թռչնաբուծությամբ:

Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (242հա), խոտհարքերը (64հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, խոտհարքեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 254, 92, 126 հեկտար: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների, պտուղների մշակությամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Վարդապետություն

Բնդեքս՝ 2808